

Միջազգային գիտական տարածքին ինտեգրվելու նոր մեխանիզմներ



Ֆինանսավորման առումով ամենաշատ աճ գրանցածը գիտության ոլորտն է

Որտեղ հաց, այնտեղ էլ կաց: Այս առումով մեր գիտնականներին գրավում են գիտության վրա ՀՆԱ—ի ավելի մեծ տոկոս ծախսող երկրները: Հենց այդպիսի պետություններում էլ ձևավորված «մագնիսական դաշտը» հաճախ ձգում—տանում է ուղեղներ: ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի համար, սակայն, դրանում ոչ մի վատ բան չկա: «Եթե հաշվի առնենք, որ գիտությունը բաց համակարգ է, եւ գիտության զագացման համար գիտնականների միջազգային շփումները խիստ անհրաժեշտ են, ապա գիտնականների ազատ տեղաշարժի մեջ ոչ մի վատ բան չեմ տեսնում: Այլ հարց է այն, որ մենք ինքներս պետք է ստեղծենք այնպիսի պայմաններ, որ մեր լավ գիտնականները գնալուց հետո նաեւ վերադառնան»,—երեկ հրավիրված ասուլիսի ժամանակ ասաց նա:

Բայց մինչ կփորձենք գնացողների համար «տեղական» գիտությունը գրավիչ դարձնել, այն «ծերանում» է: Հարությունյանն ինքն էլ գիտակցում է, որ այսօր մեր երկրում գիտության ծերացման խնդիր ունենք: Սա միայն ՀՀ—ում չէ: Զարգացած երկրներն էլ են բողոքում դրանից: Բայց հուրախություն մեզ՝ վերջին ժամանակներում ծերացման տեմպերը մեզ մոտ փոքր—ինչ դանդաղել են: Դա հասկանալու համար ԳՊԿ նախագահն առաջարկում է գնալ Մատենադարան: Այստեղ աշխատակիցների 60 տոկոսը երիտասարդներ են: Այլ հարց է միջին սերնդի խնդիրը: Ս. Հարությունյանի խոսքերով՝ 35—45 տարիքային սահմանում բավականին կորուստներ ունենք: Այս դեպքում էլ վիճակը նույնն է հետխորհրդային բոլոր երկրներում: «Սա լուծելի խնդիր է, բայց ժամանակ է պահանջում: Ճիշտ է, մեր հնարավորությունները բավականին սահմանափակ են, բայց դա չի նշանակում, որ այդ ուղղությամբ չպետք է աշխատել: Այս հարցերն աստիճանաբար պետք է լուծել: Բնականաբար, գիտության բյուջեի մեծացմանը զուգընթաց համապատասխան ծրագրեր են մշակվում: Շուտով ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի գիտության երիտասարդացման ծրագիրը: Դրա շրջանակներում համապատասխան միջոցառումներ են նախատեսվում: Միանգամից հնարավոր չէ հասնել չգիտեմ ինչ արդյունքների: Ֆինանսական միջոցների եւ ժամանակի խնդիր կա: Ֆինանսավորման ծավալներն այնքան էլ մեծ չեն: Բայց տարեցտարի աճում են: 13.3 տոկոս բյուջեի աճ ենք ունեցել: Այս առումով ամենաշատ աճ գրանցածը գիտության ոլորտն է: Բավարար է՝ իհարկե բավարար չէ: Ցանկալի կլիներ ավելի մեծ գումարներ ունենայինք, որովհետեւ խնդիրները շատ են: Եթե անգամ հինգ անգամ գիտության բյուջեն աճեր, այդ գումարները դարձյալ բավարար չէին լինի»:

Բանն այն է, որ ՀՀ գիտական հիմնարկների սարքավորումների մեծ մասը հնացել է: Կոմիտեի ղեկավարի «կոպիտ» հաշվարկներով՝ վերագինման համար մոտ 200 մլն դոլար գումար է պետք:

«Զեմ ասում, որ մեր ձեռնարկած գործողություններն ամենաճիշտն են, բայց, կարծում եմ, որ ճիշտ ուղղության վրա ենք»,—նշեց նա՝ առաջարկելով հիշել գիտության՝ 4 տարի առաջվա վիճակը եւ համեմատել ներկայիս արդյունքների հետ. բավականին գործ է արվել: Լուրջ

հաջողություններ կան նաև «Քենդլ» նախագծում: Մեր եվրոպացի գործընկերներն ավելին են արել, քան սպասվում էր: Սարքավորումները, որոնք նախատեսված էին «Քենդլ» նախագծի շրջանակում AREAL լազերային բարձր հաճախականության գիտահետազոտական գծային արագացուցչի համար, արդեն Հայաստանում են: Այն շահագործման կհանձնվի այս տարվա ապրիլին:

Ընդհանուր առմամբ 2012—ը հաջող է եղել ոչ միայն այս ծրագրի մասով: Անցած տարվա ընթացքում կոմիտեի կողմից մշակվել են ՀՀ կառավարության 11 որոշում եւ երկու նոր օրենքի նախագիծ: Այդպիսով հնարավորություն կտրվի ներդնել գիտական եւ գիտատեխնիկական ծրագրերի ու թեմաների ընտրության, ինչպես նաև հաշվետվությունների գնահատման ժամանակակից եղանակ: Նախաձեռնությունները կնպաստեն գիտության եւ տեխնիկայի միջազգային մակարդակին համապատասխան զարգացմանը, նախագծերի ընտրությանն ու արդյունավետ իրականացմանը եւ, վերջնական արդյունքում, գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:

Հաշվետու տարում կոմիտեի մշակած 11 որոշումներից 7—ն ընդունվել է: Մասնավորապես, ՀՀ կառավարությունը հավանություն է տվել հայագիտության զարգացման հայեցակարգին, հայագիտության ոլորտի զարգացման 2012—2025 թվականների ռազմավարությանը եւ դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին: Ընդունվել է «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: Մշակվել ու առայժմ քննարկումների փուլում է նաև «Հասարակական գիտությունների հիմնադրամ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հիմնադրամի ստեղծումը հնարավորություն կտա տարբերակել բնագավառի ֆինանսավորման աղբյուրները, կնպաստի գիտական կադրերի պատրաստման ու վերապատրաստման ժամանակակից մեխանիզմների կիրառմանը, թույլ կտա ներդնել գիտական ծրագրերի եւ թեմաների ընտրության ճկուն մեխանիզմներ, կնպաստի միջազգային գիտական տարածք ինտեգրման մակարդակի բարձրացմանը:

Այսպիսով, Ս. Հարությունյանն անցած տարին հաջող է համարում. բավականին նվաճումներ են եղել: Միաժամանակ բացթողումներ էլ են արձանագրվել. «Բայց ձեռքբերումներն անհամեմատ ավելի շատ են»:

Թամարա ՄՈՒՐՄԱՆՅԱՆ

Հայաստանը պետք է ակտիվացնի ինտեգրումը համաշխարհային գիտության ոլորտում. Գիտության պետական կոմիտեի ղեկավար

Հայաստանի գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը կարևոր է համարում գիտական գործունեության ուղղությամբ Հայաստանի միջազգային փոխգործակցության ընդլայնումը.

«Քանի որ գիտությունը բաց համակարգ է և չի կարող զարգանալ առանձին երկրում, դրա զարգացման համար շատ կարևոր նշանակություն ունեն միջազգային կապերը: Միջազգային փոխգործակցությունը Հայաստանի գիտական ոլորտի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկն է», – ուրբաթ ասուլիսի ժամանակ ասաց Հարությունյանը.

Այդ կապակցությամբ նա նշեց, որ վերջին 4,5 տարիների ընթացքում Հայաստանի կողմից ավելի քան 30 միջազգային պայմանագիր և համաձայնագիր է ստորագրվել գիտության ոլորտում, ընդ որում դրանցից հինգը՝ 2012թ.-ին.

Այդ պայմանագրերի թվում Հարությունյանն ընդգծեց գիտական ծրագրերի մրցույթի անցկացման մասին Ռուսական հումանիտար գիտական հիմնադրամի հետ կնքված համաձայնագիրը՝ Հիմնադրամի և Հայաստանի գիտության պետական կոմիտեի համագործակցության շրջանակներում, ինչպես նաև Շանհայի ֆիզիկայի կիրառական ինստիտուտի հետ կնքված երկկողմ համագործակցության կարգավորման մասին համաձայնագիրը.

Խոսելով Հայաստանից «ուղեղների արտահոսքի» և գիտության ծերացման խնդրի մասին՝ փորձագետը նշեց, որ ոչ մի վատ բան չի տեսնում երիտասարդ կադրերի տեղաշարժման մեջ՝ հաշվի առնելով արտաքին կապերի զարգացման անհրաժեշտությունները: Սակայն դրա հետ մեկտեղ նա կարևորեց Հայաստանում նման պայմանների ստեղծումը, որոնք խթան կհանդիսանան երիտասարդ մասնագետներին հայրենիք վերադարձնելու համար.

«Գիտության ծերացման խնդիրը մի քանի բացատրություն ունի, մասնավորապես այն, որ երիտասարդ գիտնականներն առավել գրավիչ են համարում այն երկրները, որտեղ գիտությանը բաժին է հասնում ՀՆԱ-ի առավել մեծ տոկոսը», – նշեց Հարությունյանը՝ պարզաբանելով, որ այդ հարցում գիտական աշխատանքների ֆինանսավորումը կարևոր դեր է խաղում.

Ըստ նրա, Հայաստանի գիտության զարգացմանը խոչընդոտող խնդիրների լուծմանը կնպաստեն 2013թ.-ին 13,3 տոկոսով բյուջետային միջոցների ավելացումը, որոնք հատկացվում են գիտական ոլորտի կարիքների համար.

«Միջոցները կօգտագործվեն 2013թ.-ին ծրագրի ուղղությամբ մի շարք միջոցառումների անցկացման համար, որն ուղղված է գիտական ոլորտի «երիտասարդացմանը», որը մենք շուտով կներկայացնենք կառավարության հաստատմանը», – ամփոփեց Հարությունյանը.

Հայաստանում գիտության բյուջետային ֆինանսավորումը 1 մլրդ դրամով (շուրջ 2,4 մլն դոլար) կաճի 2013թ.-ին և կկազմի 11,1 մլրդ դրամ (շուրջ 27,2 մլն դոլար).

Ավելի վաղ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանձնարարել էր լրացուցիչ 100 մլն դրամ (260 հազար դոլար) հատկացնել երկրի երիտասարդ գիտնականների նախագծերի ֆինանսավորման համար: Պետությունը բյուջեից տարեկան շուրջ 300 մլն դրամ (780 հազար դոլար) է հատկացնում նման նախագծերին: –0–

2012 թվականը գիտության համար հաջող տարի էր. Սամվել Հարությունյան



Այսօր մամուլի ասուլիսում ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը ներկայացրեց Գիտության պետական կոմիտեի 2012 թվականի գործունեության ամփոփումը: Նա

2012 թվականը գիտության ոլորտի համար բավականին հաջող համարեց, քանի որ ունեցանք բավականին ձեռքբերումներ: «Եղան նաև ինչ-որ իմաստով բացթողումներ, սակայն ձեռքբերումներն անհամեմատ ավելի շատ են», -ասաց նա:

Սամվել Հարությունյանը նախ կարևորեց 2012 թ. ընթացքում կոմիտեի կողմից մշակված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» և «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքների նախագծերը և այդ օրենքների ընդունումը համարեց հրատապ:

Սամվել Հարությունյանը կարևորեց նաև «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշումը և «Քենդլի» գործունեությունը համակարգելու համար լիազոր մարմնի նշանակումը, հիմնադրամի կանոնադրության հաստատումը:

Նա հայտնեց, որ անցած տարում մշակվել է Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը, իսկ «Հասարակական գիտությունների հիմնադրամ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը դեռևս քննարկումների փուլում է:

Ի դեպ նախատեսված է այս տարի Հ1-ով ներկայացնել գիտությանը նվիրված հաղորդաշար:

Այսպիսով նախորդ տարվա ընթացքում կոմիտեն հայտարարել և անցկացրել է գիտական ծրագրերի ֆինանսավորման 3 մրցույթ, պետական միջոցներով իրականացվել է մոտ 200 գիտական գործուղում, ձեռք են բերվել 100 մլն դրամից ավելի սարքեր և սարքավորումներ: 2012-ի ընթացքում ֆինանսավորվել են 19 գիտական միջոցառումներ, 3 ամառային դպրոցներ, միջազգային գործուղման է մեկնել ավելի քան 50 գիտնական:

Սամվել Հարությունյանը հայտնեց, որ 2012 թվականը նպաստավոր է եղել նաև միջազգային համագործակցության առումով: Նա նշեց, որ միջազգային համագործակցությունը համարում է գերակայություններից ամենակարևորը, և մենք այսօր աննախադեպ միջազգային կապեր ունենք:

Գիտության արագ ծերացման դեմ պետության դանդաղ քայլերը



Այսօր մամուլի ասուլիսում ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը նշեց, որ 2013 թվականի գիտության ոլորտի բյուջեն աճել է 13,3 տոկոսով և կազմում է 11, 5 միլիարդ դրամ: Նա հայտնեց, որ այս տարի նախատեսված են մի շարք մրցույթներ և առաջին անգամ հայտարարվելու է գիտական սարքավորումների ձեռքբերման մրցույթ, ինչը շարունակական է լինելու: «Այս տարվանից սկսած ամեն տարի 3-5 գիտական լաբորատորիաներ են գնվելու: Պետությունը բավականին լուրջ գումարներ է նախատեսել գիտական սարքավորումներ ձեռքբերելու համար և այդ բոլորն արվելու են մրցույթների միջոցով», -ասաց Սամվել Հարությունյանը:

Mardik.am-ի ղիտարկմանը, թե գիտնականներից շատերը նշում են, որ պետական ֆինանսավորումը այս տեմպերով շարունակելու դեպքում կունենանք գիտության ծերացում, Սամվել Հարությունյանն արձագանքեց. «Ծերացման խնդիր կա, սակայն դա միայն ՀՀ-ի խնդիրը չէ: Նույնիսկ զարգացած երկրները բողոքում են գիտության ծերացումից: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այն երկրները, որոնք ՀՆԱ-ի ավելի մեծ տոկոս են գիտության ոլորտի համար ծախսում, ավելի գայթակղիչ են գիտնականների համար»: Սամվել Հարությունյանը նշեց, որ գիտությունը բաց համակարգ է և առանձին երկրում այն զարգանալ չի կարող, քանի որ գիտնականների միջազգային շփումները շատ կարևոր են գիտության զարգացման համար, և գիտնականների ազատ տեղաշարժի մեջ նա ոչ մի վատ բան չի տեսնում: «Այլ հարց է, որ մենք ինքներս պետք է ստեղծենք այնպիսի պայմաններ Հայաստանում, որ մեր լավ գիտնականները գնալուց հետո նաև վերադառնան», -ասաց նա:

Շարունակելով պատասխանել հարցին, նա նշեց, որ հիմա շատ երիտասարդներ են ներգրավված գիտության ոլորտում: Մեր ղիտարկմանը, թե մենք միջին սերունդ չունենք, պարոն Հարությունյանը համաձայնվեց և ավելացրեց, որ կամաց-կամաց այդ հարցերը պետք է լուծվեն և դրա համար ժամանակ է պետք:

Mardik.am-ի հարցին, թե արդյոք գիտության ծերացումը պետական քաղաքականության բացը չէ, Սամվել Հարությունյանը հարցով պատասխանեց. «Դուք կարծո՞ւմ եք, որ պետությունը հատուկ քաղաքականություն է վարում, որպեսզի գիտնականները հեռանան Հայաստանից», որին ի պատասխան ասացինք `«Ոչ, չի մշակում, որպեսզի չհեռանան»:

Սամվել Հարությունյանը նշեց, որ այս տարի նախատեսված է գիտնականների երիտասարդացման ծրագիր իրականացնել: Իսկ ինչ վերաբերում է դրա ուշ լինելուն, նա ասաց որ ուշ չէ, և եթե համեմատում ենք գիտության ոլորտը 4 տարի առաջ ունեցած գիտության ոլորտի հետ, ապա տարբերությունն ակնհայտ է, սակայն ամեն ինչ միանգամից հնարավոր չէ անել:

Գիտպետկոմի նախագահը՝ ուղեղների արտահոսքի մասին. «Որտեղ հաց, էնտեղ կաց»



Այսօր Մամուլի ազգային ակումբում կայացած ասուլիսում, խոսելով ոլորտի բացթողումներից, ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը նշեց. «Ցավոք 2012-ին մեզ չհաջողվեց կառավարությունով անցկացնել ֆինանսավորման կարգերը, որոնց մեջ հստակեցված են գիտական անկախ փորձաքննության մեխանիզմերը եւ ֆինանսավորման բազմաձեւությունը, եւ ես հույս ուեմ, որ 2013-ին վերջապես գիտական փորձաքննության օրենքի ընդունումից հետո նաեւ ֆինանսավորման նոր կարգերը կընդունվեն: Դա մեզ հնարավորություն կտա ավելի քաղաքակիրթ եղանակներով անցկացնել աշխարհին համահունչ գիտական ծրագրերի մրցույթներ եւ կհեշտացնի գիտության ոլորտում մեր գործունեությունը»

Գիտության ծերացման եւ Հայաստանից գիտնականների հեռանալու վերաբերյալ էլ գիտպետկոմի նախագահն ասաց. «Գիտության ծերացման խնդիրն իսկապես ունենք եւ դա միայն Հայաստանի Հանրապետության խնդիրը չէ, զարգացած երկրները եւս բողոքում են: Ես իտալացիների հետ բավականին ջերմ կապերի մեջ եմ, որովհետեւ այնտեղ եմ աշխատել ժամանակին, իտալացիք նույնպես դժգոհում են, որ իրենց գիտությունը ծերանում է , դա մի շարք բացատրություններ ունի: Մեկն էլ այն է, որ այն երկրները, որոնք ՀՆԱ-ի ավելի մեծ տոկոս են գիտության վրա ծախսում, գայթակղիչ են գիտնականի համար, ուստի աշխատում է հետեւյալ սկզբունքը՝ «որտեղ հաց, էնտեղ կաց»: Դրա համար մարդիկ շատ հաճախ Հայաստանից գնում են, աշխատում եւ վերադառնում»:

Սամվել Հարությունյանի ձեռնարկում, գիտությունը բաց համակարգ է, եւ գիտնականների միջազգային շփումներն անհրաժեշտ են գիտության զարգացման համար, ուստի գիտնականների ազատ տեղաշարժի մեջ ոչ մի վատ բան չարժի տեսնել. «Այլ հարց է, որ պիտի պայմաններ ստեղծվեն գիտնականների չհեռանալու համար: Օրինակ, շուտով կառավարության հաստատմանը կներկայացվի Գիտության երիտասարդացման ծրագիրը, որով համապատասխան միջոցառումներ կնախատեսվեն: Հո պետությունը հատուկ քաղաքականություն չի՞ մշակում, որ գիտնականները հեռանան»:

Գիտության պետական կոմիտեի համար 2012-ն արդյունավետ տարի էր



ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի համար 2012 թվականը, չնայած որոշ բացթողումների, հաջողված տարի էր: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ ինչպես հունվարի 11-ին հրավիրված ասուլիսում ասաց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, անցյալ տարվա ձեռքբերումները բավականին շատ էին, իսկ բացթողումները կստիպեն, որ այս տարում ավելի արդյունավետ աշխատանք կատարվի:

Նախորդ տարում գիտական-գիտատեխնիկական ոլորտում բավականին վերամշակումներ են եղել. ներկայացվել է նոր օրենքի նախագիծ, ինչն ընթացքի մեջ է: Որպես ձեռքբերում առանձնացվում է նաև «Գիտական-գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Հարությունյանի վստահեցմամբ՝ այն գիտական թեմաների ընտրության հնարավորություններ կտա, կնպաստի գիտության և միջազգային տեխնիկայի համապատասխան զարգացմանը, ինչպես նաև գիտության ոլորտում ֆինանսավորման բարձրացմանը: «2012-ին ընդունվեց Հայագիտության զարգացման հայեցակարգը և հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ ստեղծելու վերաբերյալ կառավարության որոշումը, երիտասարդ կադրերի համալրման ծրագիրը և այլն», - թվարկեց կոմիտեի նախագահը:

Անցյալ տարում կոմիտեն իրականացրել է նաև մի շարք միջազգային մրցույթներ, մասնավորապես՝ հայ-ֆրանսիական համագործակցության շրջանակում կազմակերպված մրցույթը: Հայտարարվել էր նաև հայ-գերմանական համատեղ համագործակցության ծրագրերի մրցույթը, որն ամփոփման փուլում է:

«2012-ին 200 գիտնականներ գործուղումներ են ունեցել տարբեր երկրներում, գնվել է շուրջ 100 մլն դրամի գիտական սարքավորումներ: Ֆինանսավորվել են 50 գիտնականներ, ովքեր աշխարհի տարբեր երկրներում մասնակցել են խոշոր միջոցառումների», - ասաց ԳՊԿ-ի նախագահը՝ հավելելով, որ կոմիտեն ֆինանսավորել է նաև 19 գիտաժողովներ և երեք ամառային դպրոցներ:

Կոմիտեի 2013 թ. բյուջեն աճել է 13.3 տոկոսով: Այն հնարավորություն կտա երիտասարդ գիտնականներին աջակցելու, գիտական սարքավորումներ ձեռք բերելու, միջազգային և այլ մրցույթներ հայտարարել: Գումարին զուգահեռ կոմիտեում ավելացել է նաև թեմատիկ ծրագրերի թիվը:

Սամվել Հարությունյանը վստահ է, որ 2013-ին կընդունվի «Գիտության և գիտական փորձաքննության մասին» օրենքը, ինչը կհեշտացնի ԳՊԿ-ի աշխատանքը:

Գիտության պետական կոմիտեն մշակում և իրականացնում է գիտության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Կոմիտեի լիազորությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, ՀՀ Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, ՀՀ կառավարության որոշումներով, Կրթության և գիտության նախարարության կանոնադրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերով:

2012-ը նպաստավոր է եղել գիտության համար. Գիտության պետական կոմիտեի նախագահ

2012 թվականը գիտության ոլորտի համար եղել է ձեռքբերումների տարի: Այսօր լրագրողների հետ հանդիպմանը նման կարծիք հայտնեց ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Կոմիտեի նախագահին կարևորեց Կառավարության կողմից ընդունված մի շարք որոշումներ, որոնք նպաստել են գիտական ոլորտի զարգացմանը:

«Ձեռքբերումներից է «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվեց Կառավարության կողմից և այն հնարավորություն կտա ներդնել գիտական և գիտատեխնիկական ծրագրերի և թեմաների ընտրության, ինչպես նաև հաշվետվությունների գնահատման ժամանակակից եղանակ, կնպաստի գիտության և տեխնիկայի միջազգային մակարդակի համապատասխան զարգացմանը», - ասաց Սամվել Հարությունյանը:

2012-ին ընդունվել են նաև «Հայագիտության զարգացման հայեցակարգը», «Հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարությունը», ««Քենդլ» սինխրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ հիմնադրամ հիմնադրելու մասին» որոշումը:

«Կարևոր է նաև գիտության ոլորտում երիտասարդների ներգրավման ծրագիրը, որը հնարավորություն կտա ներդնել գիտական, գիտամանկավարժական կադրերի ժամանակակից եղանակներ, գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրել: Հայտարարվել են մի շարք մրցույթներ, որոնք կնպաստեն գիտության ֆինանսավորմանը», - ասաց Սամվել Հարությունյանը:

Բացի ներպետական որոշումներից, գիտության կոմիտեի նախագահին կարևորեց նաև միջազգային համագործակցության ոլորտում ունեցած հաջողությունները:

«Տարվա ընթացքում կնքվել է միջազգային համագործակցության 5 փաստաթուղթ: Շանհայի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի միջև համագործակցություն հաստատելու մասին «ՀՀ ԿԳՆ-ի և Չինաստանի կրթության և տեխնոլոգիաների նախարարության միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությունը խորացնելու մասին» պայմանագիր կնքվեց, որը պետք է շատ լուրջ արդյունքների բերի», - ասաց Սամվել Հարությունյանը:

Բանախոսի կարծիքով Չինաստանի հետ կնքված պայմանագիրը շատ լուրջ արդյունքների կբերի, որովհետև Չինաստանը մի երկիր է, որն իր ՀՆԱ-ից, որը կազմում է 11.8 տրիլիոն դոլար, տարեկան ծախսում է 150 մլրդ դոլար:

Խոսելով 2013 թվականի ծրագրերի մասին՝ Սամվել Հարությունյանն ասաց, որ կհայտարարվի թեմատիկ ծրագրերի մրցույթ, երիտասարդ գիտնականների աջակցության շրջանակում կֆինանսավորվի 20-25 ծրագիր, ՀՀ պատմության մեջ առաջին անգամ գիտական սարքավորումներ ձեռքբերելու համար կհայտարարվի մրցույթ և ձեռք կբերվի մոտ 5 գիտական լաբորատորիա:

«ՈՐՏԵՂ ՀԱՅ, ԱՅՆՏԵՂ ԿԱՅ»

Տեսանյութ՝ http://www.youtube.com/watch?feature=player_embedded&v=h_amw95OL-g

Գիտության ոլորտը 2012 թվականին գրանցել է 13,3 % բյուջեի աճ:

Այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Այս փաստը հաշվի առնելով, կարող ենք ասել, որ գիտությունը ամենաաճող ոլորտն է: Մեզ համար համար անցած տարին կարելի է ասել հաջող էր», - ասաց Սամվել Հարությունյանը: Կոմիտեի նախագահի խոսքերով անցած տարի իրենք կառավարությանը ներկայացրել են նոր օրենքի նախագիծ, որը պետք է դրվի քննարկման. «Անցած տարի, որպես ձեռքբերում կարող ենք նշել «Գիտական-գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը կնպաստի գիտության և միջազգային տեխնիկայի համապատասխան զարգացմանը, ինչպես նաև հնարավորություն կտա, որ գիտության ոլորտում ֆինանսավորումը բարձրանա»:

Սամվել Հարությունյանը, ամփոփելով նախորդ տարվա ձեռքբերումները, նշեց, որ իրականացվել են մի շարք միջազգային մրցույթներ, որոնց միջոցով ֆինանսավորվեցին մի շարք ծրագրեր. «Կարևոր էր հատկապես հայ-ֆրանսիական համագործակցությունը, անցած տարի առաջին անգամ հայտարարվել էր Ռուսաստանի հետազոտության կենտրոնի հետ մրցույթ: Շատ կարևոր էր նաև հայ-գերմանական համատեղ համագործակցության ծրագրերի մրցույթը, որը դեռ ամփոփման փուլում է»:

Սամվել Հարությունյանի տվյալներով անցած տարի ֆինանսավորվել են 50 գիտնականներ իսկ 200 հայ գիտնականներ գործուղումներ են ունեցել տարբեր երկրներում. «Գնվել են շուրջ 100 մլն դրամի գիտական սարքավորումներ, իսկ կոմիտեն ֆինանսավորել է 19 գիտաժողովներ և երեք ամառային դպրոցներ»:

Իսկ լրագրողի այն հարցին, որ Հայաստանում գիտության ոլորտը ծերանում է իսկ մեր լավագույն գիտնականները լքում են երկիրը Սամվել Հարությունյանը պատասխան . «Գիտնականները աշխատում են՝ որտեղ հաց, այնտեղ կաց սկզբունքով: Նրանց համար շատ կարևոր է միջազգային շփումը, սակայն հարկավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որ եթե նրանք գնում են, գոնե հետո վերադառնան» :



Սամվել Հարությունյան. «2012թ-ին գիտության ոլորտում բացթողումներ կային, բայց ձեռքբերումներն ավելի շատ էին»

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր ամփոփելով իր ղեկավարած կառույցի 2012թ-ի գործունեության արդյունքները, նշեց, որ գիտության ոլորտի համար հաջող տարի էր, ունեցել են բավականին մեծ ձեռքբերումներ:

«Իհարկե նաև բացթողումներ կային, բայց ձեռքբերումներն ավելի շատ էին: Հուսով եմ, որ դա նպաստավոր պայմաններ կստեղծի, որպեսզի 2013 թ-ին ունենանք ավելի շատ հաջողություններ», - ասաց Ս.Հարությունյանը:

Խոսելով ձեռքբերումներից, նա հատկապես կարևորեց գիտությունը իրավական դաշտ բերելը: Մասնավորապես, առանձնացրեց «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի նախագծի մշակումն ու ՀՀ կառավարության կողմից «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքի նախագծի ընդունումը: Բացի այդ, անցած տարի Կառավարության կողմից ընդունվել է Հայագիտության զարգացման հայեցակարգը, հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թթ. ռազմավարությունն ու ժամանակացույցը:

Ս.Հարությունյանը նշեց, որ 2012թ-ին բացի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացված ֆինանսավորումից, պետական աջակցությամբ ֆինանսավորվել են մի շարք այլ ծրագրեր, մասնավորապես, պետական միջոցներով իրականացվել է 200 գիտական գործուղում, ինչպես նաև ձեռք են բերվել 100 մլն դրամից ավելի արժողությամբ գիտական սարքավորումներ:

Անդրադառնալով միջազգային համագործակցությանը, Ս.Հարությունյանը նշեց, որ 2012թ-ը նպաստավոր է եղել նաև միջազգային համագործակցության առումով: Ըստ նրա՝ անցյալ տարի կնքվել է միջազգային համագործակցության 5 փաստաթուղթ, իսկ վերջին 5 տարիների կտրվածքով, այդ թիվը հասնում է 30-ի: Մասնավորապես, նախորդ տարի ստորագրվել են ՀՀ ԿԳՆ գիտպետկոմի և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի միջև համագործակցության շրջանակներում գիտական մրցույթի անցկացման մասին» և «ՀՀ ԿԳՆ գիտպետկոմի և Thomson Reuters ընկերության միջև համագործակցության մասին» պայմանագրերը, «Գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման միջազգային համագործակցության աջակցման նորարարական կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագիրը, ինչպես նաև ստորագրվել են «ՀՀ ԿԳՆ Գիտպետկոմի և Շանհայի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի միջև համագործակցություն հաստատելու մասին», «ՀՀ ԿԳՆ և ՉԺՀ կրթության և տեխնոլոգիաների նախարարության միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությունը խորացնելու մասին» հուշագրերը:

«Մենք Չինաստանի հետ ունենալու ենք լուրջ համագործակցություն: Չինաստանի ՀՆԱ-ն տարեկան 11,8 տրիլիոն դոլար է կազմում, իսկ դրա 1,2 %-ը՝ 150 մլրդ դոլարը ծախսում է գիտության վրա: Չինաստանի նման երկրի հետ գիտության ոլորտում համագործակցությունը համարում եմ մեծ ձեռքբերում», - ասաց Ս.Հարությունյանը:

Անդրադառնալով 2013թ-ի գիտության ոլորտի ֆինանսավորմանը, Ս.Հարությունյանը տեղեկացրեց, որ ոլորտին հատկացվող գումարներն այս տարի ավելացել են, մասնավորապես, այս տարվա բյուջեն աճել է 13.3%-ով և կազմում է 11.5 մլրդ դրամ: Ինչ վերաբերում է աշխատանքներին, նշեց, որ այս տարի կհայտարարվի գիտական սարքավորումների ձեռքբերման մրցույթ, ինչը շարունակական բնույթ կկրի: «Այսուհետ, ամեն տարի 3-5 գիտական լաբորատորիաներ ենք գնելու: Պետությունը լուրջ գումարներ է նախատեսել գիտական սարքավորումների ձեռքբերման համար», - ասաց Ս.Հարությունյանը:

Ներկայացվելու է հայկական գիտության երիտասարդացման ծրագիր



«Եթե նույնիսկ հինգ անգամ գիտությանը տրամադրվող գումարներն աճեն, էլի բավարար չի լինի, որովհետև, կարծում եմ, գիտական սարքավորումների խնդիր ունենք: ՀՀ գիտական հիմնարկների սարքավորումները հնացել են, և դրանց վերագինման համար ամբողջ գիտական սարքավորումների համար մոտ 200 մլն դոլար գումար է այսօր անհրաժեշտ, այնպես որ, բյուջեն շատ չէ, բայց այն, որ աճ կա, դա էլ պետք է նշենք», այսօր լրագրողների հետ հանդիպմանն ասել է ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը:

Իսկ գիտության ծերացման խնդիրը, որը առկա է ՀՀ-ում, Սամվել Հարությունյանը միայն Հայաստանի խնդիր չի համարում, քանի որ անգամ զարգացած երկրներն են բողոքում, որ իրենց գիտությունը ծերանում է: Պատճառը, ըստ Սամվել Հարությունյանի, այն է, որ կան երկրներ, որոնք ՀՆԱ-ի ավելի մեծ տոկոս են գիտությանը հատկացնում, իսկ գիտնականներն էլ հետևում են որտեղ հաց, այնտեղ կաց սկզբունքին: Հայաստանում, նրա խոսքով, պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ գիտնականները եթե անգամ գնում են, գնալուց հետո նաև վերադառնան: Նա նշել է, որ կան արդեն գիտական հաստատություններ, որտեղ աշխատակիցների 50-60 տոկոսը երիտասարդներ են, ինչպես օրինակ՝ Էկոնոսֆերայի ինստիտուտը, Մատենադարանը: Բայց կա գիտնականների միջին սերնդի խնդիր, 35-40 տարեկան գիտնականների խնդիր կա:

Նա ասել է, որ շուտով կառավարության հաստատմանը կներկայացվի հայ գիտնականների երիտասարդացման ծրագիր:

Նա 2012-ը հաջող տարի է համարում գիտության ոլորտում, եղել են ձեռքբերումներ, բայցև բաթողումներ էլ կան, որոնք փորձելու են լուծել 2013-ին: 2012-ին գնվել է 100 մլն դրամի գիտական սարքավորումներ: Այս տարի առաջին անգամ 2013-ին գիտական սարքավորումների ձեռքբերման մրցույթ կհայտարարվի, Սամվել Հարությունյանի խոսքով՝ պետությունը բավական լուրջ գումարներ է նախատեսել դրանք ձեռքբերելու համար: 2013-ին գիտության ֆինանսավորումն ավելացել է 13,3 տոկոսով:

Հայաստանում գիտության ծերացման տեմպերը փոքր-ինչ ընկել են. ԳՊԿ նախագահ



Գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) նախագահ Սամվել Հարությունյանը 2012-ը հաջող տարի էր համարում գիտության համար. եղել են ձեռքբերումներ, բայց նաև բացթողումներ կան, որոնք կփորձեն լուծել 2013-ին:

Նա նախ խոսեց 2012-ին ԳՊԿ-ի իրավական դաշտի ձեռքբերումների մասին: ՀՀ կառավարության 11 որոշում են մշակել, որից ընդունվել է 7-ը, բացի այդ՝ նոր օրենքի երկու նախագիծ է մշակվել: Ընդունվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքները:

Սամվել Հարությունյանը կարևորեց նաև Հայագիտության զարգացման հայեցակարգը (2012-2025թթ. ռազմավարությունը), կարևոր էր նաև Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ հիմնադրելու մասին ՀՀ կառավարության որոշումը:

Նա կարևորեց նաև «Քենդլ սինխրոտորանային ինստիտուտ հիմնադրամ» հիմնադրելու մասին ՀՀ կառավարության որոշումը: Ս. Հարությունյանը շեշտեց նաև այն, որ գիտության ոլորտում ներդրվել է երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիր:

2012-ին ֆինանսավորվել է 6 ծրագիր՝ հայ-ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում անցկացված ԳՊԿ-ԳՀԱԿ-2011 մրցույթի արդյունքում, ինչպես նաև 4 ծրագիր՝ ռուսաստանյան հումանիտար գիտությունների հիմնադրամի հետ համաֆինանսավորմամբ՝ ԳՊԿ-ՌՀԳՀ-2012 մրցույթի արդյունքում և այլն:

Թեմատիկ ծրագրերի մեկ տարվա ծրագրերի շրջանակում, որում ֆինանսավորվել են 130 թեմաներ, գիտնականները ավելի քան 200 գործուղումներ են կատարել աշխարհի տարբեր երկրներ, մասնակցել սեմինարների և այլն: Գնվել են 100 մլն դրամի գիտական սարքավորումներ:

Ըստ ԳՊԿ նախագահի՝ 2012-ի ընթացքում 17 ինովացիոն ծրագրեր են ֆինանսավորվել, որոնցից առնվազն տասի դեպքում լավ արդյունքներ են գրանցվել: Սամվել Հարությունյանը հույս հայտնեց, որ այս ծրագրերը հետագայում կներդրվեն տնտեսության մեջ:

2013-ին գիտության ֆինանսավորումն ավելացել է 13.3 տոկոսով:

2013-ին առաջին անգամ գիտական սարքավորումներ ձեռք բերելու մրցույթ կհայտարարվի, պետությունը բավական լուրջ գումարներ է նախատեսել դրանք ձեռք բերելու համար:

Այն, որ գիտությունը ծերացման միտում ունի, Սամվել Հարությունյանը համարում է ոչ միայն ՀՀ-ի խնդիրը. անգամ զարգացած երկրները, Իտալիան է բողոքում, որ իրենց գիտությունը ծերանում է: Սամվել Հարությունյանը սա բացատրում է նրանով, որ այն երկրները, որոնք գիտության վրա ծախսում են ՀՆԱ-ի ավելի մեծ տոկոս, առաջնորդվում են հետևյալ սկզբունքով՝ որտեղ հաց, այնտեղ կաց:

Գիտությունը բաց համակարգ է, և գիտնականների շփումները շատ կարևոր են, գիտնականների ազատ տեղաշարժի մեջ ԳՊԿ նախագահը վատ բան չի տեսնում, այլ հարց է, որ Հայաստանում պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ գիտնականները գնալուց հետո նաև վերադառնան:

Նա խորհուրդ տվեց այցելել Էկոնոսֆերայի ինստիտուտ և տեսնել, որ աշխատակիցների 50 տոկոսը երիտասարդներ են, Մատենադարանի աշխատակիցների 60 տոկոսը ևս երիտասարդներ են: Բայց կա միջին սերնդի խնդիր. «Խնդիր ունենք 35-40 տարեկանի սահմանում, և թեև մեր հնարավորությունները սահմանափակ են», բայց ԳՊԿ-ի նախագահ խոսքով՝ դա չի նշանակում, թե հարցը չպետք է լուծենք:

Կառավարության հաստատմանը շատ շուտով կներկայացվի հայ գիտնականների երիտասարդացման ծրագիրը, իսկ ֆինանսավորման ծավալները տարեցտարի աճում են:

«Չեմ ասում, որ մեր կատարած գործողություններն ամենաճիշտն են, բայց կարծում եմ՝ ճիշտ ուղղության վրա ենք», - հավելեց ԳՊԿ նախագահը:

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը ամփոփել է 2012-ը



ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի համար 2012 թվականը հաջողված տարի էր՝ չնայած որոշ բացթողումներին: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ հավելելով, որ բացթողումները կստիպեն, որ այս տարում ավելի արդյունավետ աշխատանք կատարվի:

Նախորդ տարում գիտական-գիտատեխնիկական ոլորտում բավականին վերամշակումներ են եղել. ներկայացվել է նոր օրենքի նախագիծ, ինչն ընթացքի մեջ է: Որպես ձեռքբերում առանձնացվում է նաև «Գիտական-գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումը. «2012-ին ընդունվեց Հայագիտության զարգացման հայեցակարգը և հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ ստեղծելու վերաբերյալ կառավարության որոշումը, երիտասարդ կադրերի համալրման ծրագիրը և այլն», - թվարկեց կոմիտեի նախագահը:

Անցյալ տարում կոմիտեն իրականացրել է նաև մի շարք միջազգային մրցույթներ, մասնավորապես՝ հայ-ֆրանսիական համագործակցության շրջանակում կազմակերպված մրցույթը: Հայտարարվել էր նաև հայ-գերմանական համատեղ համագործակցության ծրագրերի մրցույթը, որն ամփոփման փուլում է:

«2012-ին 200 գիտնականներ գործուղումներ են ունեցել տարբեր երկրներում, գնվել է շուրջ 100 մլն դրամի գիտական սարքավորումներ: Ֆինանսավորվել են 50 գիտնականներ, ովքեր աշխարհի տարբեր երկրներում մասնակցել են խոշոր միջոցառումների», - ասաց ԳՊԿ-ի նախագահը՝ հավելելով, որ կոմիտեն ֆինանսավորել է նաև 19 գիտաժողովներ և երեք ամառային դպրոցներ:

Կոմիտեի 2013 թ. բյուջեն աճել է 13.3 տոկոսով: Այն հնարավորություն կտա երիտասարդ գիտնականներին աջակցելու, գիտական սարքավորումներ ձեռք բերելու, միջազգային և այլ մրցույթներ հայտարարել: Գումարին զուգահեռ կոմիտեում ավելացել է նաև թեմատիկ ծրագրերի թիվը:

Սամվել Հարությունյանը հույս հայտնեց, որ 2013-ին կընդունվի «Գիտության և գիտական փորձաքննության մասին» օրենքը, ինչը կհեշտացնի ԳՊԿ-ի աշխատանքը:

Մամվել Հարությունյան. «Բացթողումներ կային, բայց ձեռքբերումներն ավելի շատ էին»



ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանը այսօր Մամուլի ազգային ակումբում, ամփոփելով իր ղեկավարած կառույցի գործունեության արդյունքները, գոհունակություն հայտնեց՝ 2012-ը հաջող տարի էր. «Որոշ բացթողումներ կային, բայց ձեռքբերումներն ավելի շատ էին»: Նա կարելու էր գիտությունը իրավական դաշտ բերելը՝ «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» «Գիտական եւ գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքների նախագծերը, Հայագիտության զարգացման հայեցակարգը, հայագիտության ոլորտի զարգացման 2012-2105 թթ. ռազմավարությունն ու ժամանակացույցը եւ այլն:

Գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց, որ անցյալ տարվա ընթացքում բացի «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանում եւ զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացված ֆինանսավորումից, պետական աջակցությամբ ֆինանսավորվել են մի շարք այլ ծրագրեր, պետական միջոցներով իրականացվել է 200 գիտական գործուղում, ձեռք են բերվել 100 մլն դրամից ավել արժողությամբ գիտական սարքավորումներ: Մամվել Հարությունյանը նշեց, որ կոմիտեի ջանքերով Հայաստանի գիտական հանրության համար, բացի Springer-ից, 2012 թվականին հասանելի են դարձել Thomson Reuters-ի Web of Knowledge համակարգի ռեսուրսները:

Գիտպետկոմի նախագահը հավելեց, որ անցյալ տարի կնքվել է միջազգային համագործակցության 5 փաստաթուղթ, իսկ վերջին 5 տարիների կտրվածքով, այդ թիվը հասնում է 30-ի: Նա, մանրասանելով այս համատեսքում արվածը, նշեց «ՀՀ ԿԳՆ գիտպետկոմի եւ Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի միջեւ համագործակցության շրջանակներում գիտական մրցույթի անցկացման մասին», «ՀՀ ԿԳՆ գիտպետկոմի եւ Thomson Reuters ընկերության միջեւ համագործակցության մասին» պայմանագրերը, «Գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման միջազգային համագործակցության աջակցման նորարարական կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագիրը, եւ հետևյալ հուշագրերը՝ «ՀՀ ԿԳՆ Գիտպետկոմի եւ Շանհայի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի միջեւ համագործակցություն հաստատելու մասին», «ՀՀ ԿԳՆ եւ ՉԺՀ կրթության եւ տեխնոլոգիաների նախարարության միջեւ գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությունը խորացնելու մասին»:

Մամվել Հարությունյանը հպարտ է հատկապես հայ-չինական համագործակցությամբ, ասում է դա մի երկիր է, որի ՀՆԱ-ն տարեկան 11,8 տրիլիոն դոլար է կազմում, իսկ դրա 1, 2 %-ը, այսինքն՝ 150 մլրդ դոլարը գիտության վրա է ծախսվում, ինչ վերաբերում է Ռուսաստանին, գիտպետկոմի նախագահը այս երկիրը դիտարկում է իբրև Հայաստանի ռազմավարական գործընկեր, ինչպես մյուս, այնպես էլ գիտության ոլորտում:

ԳՊԿ նախագահ. 2012-ը գիտության ոլորտում հաջող տարի էր

«2012-ը գիտության ոլորտում բավականին հաջող տարի էր: Եղան նաև բացթողումներ, բայց ձեռքբերումներն անհամեմատ ավելի շատ են: Հույս ունենք, որ դա նպաստավոր պայմաններ կստեղծի, որ 2013-ին ավելի շատ հաջողություններ ունենանք»,- այսօր լրագրողների հետ հանդիպմանն ասաց ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ ամփոփելով 2012-ը:

Հարությունյանը հատկապես կարևորում է, որ նախորդ տարի մշակվել ու կառավարությանն է ներկայացվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի նոր նախագիծը. «Այս օրենքը բավականին հնացել է: Սկզբնական շրջանում մտադիր էինք լրամշակումներ կատարել: Բայց պարզվեց, որ լրամշակված բաժիններն այնքան շատ են, որ ստիպված օրենքի նոր նախագիծ մշակեցինք: Օրենքի նախագիծը բուռն քննարկումների փուլ է անցել և 2013-ին էլ քննարկումները կշարունակվեն: Հույս ունեմ, որ կառավարության կողմից այս տարի կընդունվի և կներկայացվի ԱԺ»:

2012-ին մշակված «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքի նախագիծն էլ արդեն ԱԺ-ում է: ԳՊԿ նախագահն ասում է, որ օրենքի ընդունումը հնարավորություն կտա ներդնել գիտական և գիտատեխնիկական ծրագրերի ու թեմաների ընտրության, ինչպես նաև հաշվետվությունների գնահատման ժամանակակից եղանակ, կնպաստի գիտության և տեխնիկայի միջազգային մակարդակին համապատասխան զարգացմանը, նախագծերի ընտրությանն ու արդյունավետ իրականացմանը և ի վերջո գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը. «Նմանատիպ օրենքներ ընդունված են ԱՊՀ մի շարք երկրներում: Մեզ մոտ այս օրենքի ընդունումը համարում եմ հրատապ»:

2012-ին ընդունվեց նաև Հայագիտության ոլորտի զարգացման 2012-2015 թթ ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը: Կառավարությունն էլ որոշում ընդունեց «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ հիմնելու մասին»:

Ընդունվել է նաև գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը, որն, ըստ Հարությունյանի, հնարավորություն կտա ներդնել գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակներ, կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը:

Անցած տարի իրականացվել է 17 ինովացիոն ծրագրերի ֆինանսավորում, որից 10-ը «շատ լավ արդյունքներ են ցուցաբերել»:

Ամփոփվել է նաև IRMAS հայ-ֆրանսիական լաբորատորիայի 2-ամյա գործունեությունը. այդ ընթացքում բարձր վարկանիշ ունեցող գրախոսվող ամսագրերում տպագրվել է 45 աշխատանք, միջազգային գիտաժողովների 40 թեզիսներ: Համատեղ ասպիրանտուրայի ծրագրում ներգրավված են 6 ասպիրանտներ, որոնցից երկուսն արդեն պաշտպանել են իրենց ատենախոսությունները՝ ստանալով և հայկական և ֆրանսիական գիտական աստիճանի դիպլոմ: 2012-ին կնքվել է միջազգային համագործակցության հինգ փաստաթուղթ: Հարությունյանը հատկապես կարևորում է Չինաստանի կրթության և տեխնոլոգիաների նախարարության հետ կնքած հուշագիրը գիտության և տոխնոլոգիաների ոլորտում համագործակցությունը խորացնելու մասին: Տարածաշրջանում Չինաստանը միայն Հայաստանի հետ է նման հուշագիր ստորագրել, ինչը, ըստ Հարությունյանի, վկայում է մեր գիտության գրավչության մասին:

«Հավանաբար այս տարվա նոյեմբերին կստորագրվի մեծ պայմանագիր և Չինաստանի հետ լուրջ աշխատելու ենք: Որպեսզի լրջության մակարդակը պատկերավոր լինի, ասեմ, որ Չինաստանը աշխարհի ամենաարագ զարգացող երկիրն է աշխարհում և իր ՀՆԱ-ով երրորդն է,- ասում է Հարությունյանը: Գիտության վրա Չինաստանը ծախսում է ՀՆԱ-ի 1,2 տոկոսը կամ 150 մլրդ դոլար: Այնպես որ այդպիսի պետության հետ գիտության ոլորտում համագործակցության ծրագիրը մեծ հաջողություն էմ համարում»:

«Եթե գիտության բյուջեն 5 անգամ էլ աճեր, բավարար չէր լինի»



2013-ին առաջին անգամ անկախ Հայաստանի պատմության մեջ իրականացվելու է գիտական սարքավորումների ձեռքբերման մրցույթ, ինչը շարունակական է լինելու: Այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Պետությունն այս տարվանից լուրջ գումարներ է նախատեսել գիտական սարքավորումներ ձեռք բերելու համար, և դա արվելու է մրցույթի տեսքով: Տարեկան նախատեսում ենք գնել 3-5 լաբորատորիա: Այս տարի մենք 5 կգնենք, հույս ունեմ, որ 2014-ին այդ թիվը կմեծանա»:

Շուտով կհայտարարվի նաև ինովացիոն ծրագրերի մրցույթը, որոնց թիվն այս տարի 17-ից կհասնի 20-ի, իսկ մասնավոր հատվածի ֆինանսավորման մասնաբաժինը 15 տոկոսից կհասնի 25 տոկոսի:

«Հույս ունեմ, որ այս տարի կընդունվեն «Գիտության մասին» և «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքները, ինչը էապես կհեշտացնի գիտության ոլորտում գործունեությունը և կնպաստի զարգացմանը», - ասում է Հարությունյանը:

Անդրադառնալով գիտության ծերացման խնդրին՝ Հարությունյանն ասում է, որ նման խնդիր ունի ոչ միայն ՀՀ-ն, այլ անգամ զարգացած երկրները, օրինակ՝ Իտալիան. «Բացատրությունն այն է, որ երկրները, որոնք ՀՆԱ-ի ավելի մեծ տոկոսն են ծախսում գիտության վրա, ավելի գրավիչ են գիտնականների համար: Գիտությունը բաց համակարգ է, առանձին վերցրած երկրում գիտությունը չի կարող զարգանալ, միջազգային շփումները շատ կարևոր են գիտության զարգացման համար: Ուստի գիտնականների ազատ տեղաշարժի մեջ վատ բան չեմ տեսնում: Այլ բան է, որ Հայաստանում պետք է պայմաններ ստեղծենք, որ գիտնականները ոչ միայն գնան, այլ նաև վերադառնան»:

ԳՊԿ նախագահի խոսքով՝ գիտության ծերացման տեմպերը Հայաստանում մի փոքր ընկել են. մի շարք ինստիտուտներում աշխատակիցների զգալի մասը մինչև 35 տարեկան երիտասարդներ են: «Կորուստներ ունենք 35-45 տարեկան ինտերվալում: Միջին սերնդի խնդիր ունեն հետխորհրդային բոլոր երկրները: Սա լուծելի խնդիր է, բայց ժամանակ է պահանջում»:

Մշակվել է նաև Գիտության երիտասարդացման ծրագիրը, որը շուտով կներկայացվի կառավարության հաստատմանը:

«Գիտության բյուջեի աճ կա, բայց բավարար չէ: Խնդիրները շատ - շատ են: Եթե անգամ 5 անգամ աճեր, էլի բավարար չէր լինի, - ասում է Հարությունյանը: - ՀՀ գիտական հիմնարկների գործող սարքավորումների մեծ մասը և բարոյապես, և ամեն ինչով հնացել են: Ամբողջ գիտական սարքավորումների վերազինման համար մոտ 200 մլն դոլար գումար է հարկավոր: Այնպես որ այս ֆոնին աճը շատ չէ, բայց որ կա, փաստ է»:

Գիտության 2013-ի բյուջեն մոտ 11,5 մլրդ դրամ է՝ նախորդ տարվա համեմատությամբ մոտ 13 տոկոսով ավելի: Սակայն ՀՆԱ-ի տոկոսային առումով դրական փոփոխություն չկա: